ԱՆՈՒՇ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դիզայնի և կիրառական արվեստի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դիզայնի և կիրառական արվեստի ամբիոնի ասիստենտ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 74:7.01/097

Արդյունաբերական դիզայնը, որը ներկայումս ձեռք է բերել բացառիկ արդիականություն, ներառվել է մասնագիտացված նկարչագծագրական կազմակերպությունների կառուցվածքում, խնդիրներ և դրանց լուծման մեթոդներ սահմանելիս պահանջում է զուտ մասնագիտական մոտեցում:

Ինչպես մասնագիտացված, այնպես էլ արդյունաբերական ձեռնարկությունների շրջանակներում աշխատող արհեստավարժ նկարիչ–նախագծողների քանակն աճելու է, քանի որ այդ պահանջն է ներկայացնելու արդյունաբերական դիզայնի արտադրանքի հանրային–տնտեսական նշանակությունը, խնդիրների բազմազանությունը և կիրառման չափազանց լայն ոլորտը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ արդյունաբերական դիզայն, մասնագիտական մոտեցում, գեղարվեստական նախագծում, մասնագիտացված նկարչագծագրական կազմակերպություններ:

Արդյունաբերական դիզայնը, որը ներկայումս ձեռք է բերել բացառիկ արդիականություն, ներառվել է մասնագիտացված նկարչագծագրական կազմակերպությունների կառուցվածքում, խնդիրներ և դրանց լուծման մեթոդներ սահմանելիս պահանջում է զուտ մասնագիտական մոտեցում: Ինչպես մասնագիտացված, այնպես էլ արդյունաբերական ձեռնարկությունների շրջանակներում աշխատող արհեստավարժ նկարիչ–նախագծողների քանակն աճելու է, քանի որ այդ պահանջն է ներկայացնելու արդյունաբերական դիզայնի արտադրանքի հանրային–տնտեսական նշանակությունը, խնդիրների բազմազանությունը և կիրառման չափազանց լայն ոլորտը: Այդ կոլեկտիվներում աշխատանքի մեթոդապես ճիշտ կազմակերպումը կհանդիսանա վերջիններիս գործունեության հաջողության բաղկացուցիչներից մեկը, կբարձրացնի նկարչագծագրական մշակումների որակը և մասնագիտական մակարդակը:

Նույնիսկ մասնագիտական գործունեության այնպիսի նոր ոլորտում, ինչպիսին գեղարվեստական նախագծումն է, արդյունաբերական դիզայնը ամենաերիտասարդ մասնագիտություններից է համարվում: Արդյունաբերության սպասարկմանն ուղղված նկարիչների աշխատանքները մինչ վերջին ժամանակաշրջանը կրում էին պատահական բնույթ: Ինչն, անկասկած, արդյունաբերական դիզայնի լիարժեք և գեղարվեստական մակարդակով աշխատանքների ստեղծ-

ման համար մասնագիտացված կադրերի սղության փաստի արդյունքն է: Միևնույն ժամանակ արդյունաբերության ոլորտում պահանջների աճը նկարիչներին առաջադրում է բազմաթիվ բարդ խնդիրներ: Ցավոք, այս պայմաններում արդյունաբերական դիզայնի ոլորտ ներգրավվում են կերպարվեստի բնագավառում որոշ չափով պատրաստվածություն ունեցող կամ նույնիսկ մասնագիտական հմտություններ չունեցող մասնագետներ:

Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար քիչ է զարգացած կիրառական գրաֆիկան և համապատասխանաբար այս ասպարեզում քիչ է շոշափվում մասնագիտական ավանդույթների ժառանգորդությունը: Գործող նկարիչների փորձը խիստ սահմանափակ է, համապատասխանաբար փոքր են նաև ուսումնական հաստատություններում երիտասարդ մասնագետների պատրաստման հնարավորությունները:

Այսօր արդյունաբերական դիզայնի արվեստը Հայաստանում ակնհայտորեն ոճապես և թեմատիկորեն կապված է ազգային կերպարվեստի հետ: Սակայն այս բնագավառի ստեղծմանը հիմք է ծառայել Տեխնիկական էսթետիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի աշխատանքային փորձը, որը լրացվել և ընդլայնվել է այլ երկրների նկարիչ–նախագծողների փորձի ուսումնասիրման արդյունքներով և արդյունաբերական դիզայնում նախագծման ընդհանուր օրինաչափությունների վերլուծությամբ:

Արդյունաբերական դիզայնը, ձևավորվելով որպես յուրահատուկ բնագավառ, հանդիսանում է գրաֆիկական արվեստի բաղկացուցիչ մասը և իր ստեղծագործական բովանդակությամբ սերտորեն կապված է վերջինիս հետ: Միևնույն ժամանակ խնդիրների բնույթով, գեղարվեստական լեզվով և ստեղծման օրինաչափություններով այն նաև բացարձակ ինքնուրույն և յուրահատուկ բնագավառ է:

Հաստոցային գրաֆիկային են դասվում կերպարվեստի ինքնուրույն նշանակություն ունեցող ստեղծագործությունները: Հաստոցային արվեստի ստեղծագործությունների գաղափարական–գեղարվեստական արտահայտությունը՝ կախված նրանց գտնվելու վայրից, չի փոխվում: Հաստոցային գրաֆիկայի ստեղծագործություններից են հաստոցային նկարը, էստամպը և գծանկարային արվեստի այլ տեսակներ, որոնք ցուցահանդեսներում, հավաքածուներում, ինտերիերներում ինքնուրույն են կատարում իրենց խնդիրները: Դրանց համար գնահատման հիմք է հանդիսանում գաղափարական–գեղարվեստական մակարդակը:

Գրքային, ամսագրային, թերթային գրաֆիկան սկիզբ է առնում առաջին ձեռագիր գրքերից: Պապիրուսը, մագաղաթը, այնուհետև թուղթը, նյութեր էին, որոնց վրա գրաֆիկական միջոցներով, «ձեռքով» են կատարվել տառատեսակը, նկարները և գրքային գրաֆիկայի այլ տարրերը: Տպագրական (փայտե, կավե, հետագայում՝ մետաղական) ձևերն ի հայտ գալուն պես, գրքային գրաֆիկան ավելի մեծ զարգացում է ապրել, ձեռք բերելով գրատպության գործում տեխնիկական առաջընթացին բնորոշ յուրահատուկ մոտեցումներ:

Չնայած տեխնիկական բազմազան հնարավորություններին և միջոցներին՝ գրքային գրաֆիկան զարգացման բոլոր փուլերում ծառայել է գրքի բովանդակության արտացոլմանը: Ելնելով այդ հանգամանքից՝ գրքի գրաֆիկական ձևավորման տարրերը (պատկերները, ձևավորումները, տառաչափերը) գրքի բովանդակության ընկալմանն աջակցելու շրջանակներում կատարում են ինքնուրույն խնդիրներ:

Կիրառական գրաֆիկան ներառում է բազմաթիվ գրաֆիկական ձևեր, որոնք

ունեն անմիջական օգտապաշտական նշանակություն: Նրանց թվին են պատկանում էքսլիբրիսը, աֆիշան, պաստառը, նամականիշը, բացիկը, ծրարը, պատվոգիրը, հրավիրատոմսը, դիպլոմը և այլն:

Կիրառական գրաֆիկան կոչված է իր միջոցներով աջակցելու հանրության կենցաղի կազմակերպմանը: Նրա գործողությունների ոլորտը բավականին լայն է, ընդգրկում է մարդկային գործունեության շատ ասպարեզներ, որոնց թվում են նաև ապրանքային հարաբերությունները՝ արդյունաբերությունը և շուկան, որտեղ այն սովորաբար անվանվում է «արդյունաբերական»:

Այսօր արդյունաբերական դիզայնը կարևոր տնտեսական գործոն է, որը արդյունաբերական արտադրության աճի, առևտրի և ռեպրոդուկցիոն պոլիգրաֆիկ տեխնիկայի զարգացմանը զուգահեռ պայմանավորել է նրա մասսայական զարգացումը:

Արդյունաբերական դիզայնի առանձնահատկությունն է հստակ նշված կիրառական խնդիրը, որը սերտորեն կապված է արդյունաբերության, առևտրի, տնտեսության պահանջների հետ: Այդ պահանջները որոշում են արդյունաբերական դիզայնի բովանդակությունը, ձևի ստեղծման սկզբունքները, մեթոդները և մասնավորապես, գեղարվեստական–կերպարային լեզուն:

Այդ իսկ պատճառով արդյունաբերական դիզայնի օբյեկտները պահանջում են ինքնուրույն գեղարվեստական լուծում, մեթոդ և յուրահատուկ գրաֆիկական միջոցներ: Արդյունաբերական դիզայնի հիմքը կազմող օբյեկտների թվին են պատկանում ապրանքանիշերը, խորհրդանիշերը, ֆիրմային նշանները, սպասարկման նշանները, փաթեթավորումները, պիտակները, գովազդային պաստառները, թերթիկները, բուկլետները, կատալոգները, արդյունաբերական իրերի անձնագրերը, բլանկները և ապրանքին վերաբերող ողջ թղթաբանությունը:

Գոյություն ունի գրաֆիկայի ևս մեկ յուրահատուկ ձև, որը կարելի է դասել «արդյունաբերական» կատեգորիայի շարքին: Դրանք սարքավորումների և ռադիոապարատուրայի սանդղակներն են, ժամացույցների թվահարթակներն ու գրառումները: Այստեղ դիզայնն անմիջապես մասնակցում է արտադրանքի տարածքային–կոմպոզիցիոն կազմակերպմանը:

Արդյունաբերական դիզայնի թվարկված եղանակների մի մասը (ինչպիսին օրինակ, ապրանքանիշն է, պիտակը) պատմականորեն ձևավորվել են վաղուց, մյուս մասն էլ ի հայտ է եկել համեմատաբար ոչ վաղ անցյալում՝ կյանքի կոչվելով ապրանքային հարաբերությունների փոփոխված պայմաններով (օրինակ՝ գովազդային բուկլետը, ֆիրմային դիզայներական համալիրը): Այս բոլորից կարելի է առանձնացնել այն հիմնականը, որը բնորոշ է արդյունաբերական դիզայնին՝ պիտակ, փաթեթավորում, ապրանքանիշ և գովազդային բուկլետ: Այս օբյեկտների օրինակով կարելի է դիտարկել նաև արդյունաբերական դիզայնի հիմնական գեղարվեստական միջոցները:

Արդյունաբերական դիզայնի հիմնական խնդիրն ուղղակիորեն բխում է կիրառման ոլորտից՝ ապրանքային հարաբերությունները որոշակի կերպով սպասարկելու անհրաժեշտությունից: Խնդիրների բովանդակությունը, որոնց լուծմանը ծառայում են առանձին օբյեկտներ, այսպես թե այնպես սահմանվում է իրական պահանջմունքներով: Օրինակ՝ ապրանքն արտաքին ազդեցություններից պաշտպանելու պահանջմունքն առաջացրել է պաշտպանության գործառույթն ապահովող միջոցի ստեղծման անհրաժեշտություն: Այդպես առաջացել է փաթեթավորումը, իսկ ապրանքի մասին տեղեկացնելու և գովազդելու անհրաժեշ-

տությունն այն դարձրել է գեղարվեստական օբյեկտ:

Ձեռնարկության կողմից թողարկված ապրանքների իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու պաշտպանական գործառույթ՝ ապրանքանիշ, իսկ որպես ապրանքի տարր, գովազդ՝ վերջինիս նշանակությունն է ծառայել գեղարվեստական պրակտիկայի մի ամբողջ ոլորտի՝ խորհրդանիշերի և ապրանքանիշի ստեղծմանը, զարգացմանը:

Արտադրությունն ընդլայնելու՝ արտադրանքն իրացնելու, պոտենցիալ գնորդին գրավելու միտումը ստեղծել է արդյունաբերական դիզայնի ձև՝ գովազդային բուկլետ, որի հիմնական գործառույթը գովազդի միջոցով տեղեկացնելն է:

Արդյունաբերական դիզայնը լուծում է իրավունքների պաշտպանության և պահպանության, գովազդի և տեղեկատվության օգտապաշտությամբ հագեցված խնդիրներ: Սակայն գոյություն ունեն նաև գեղագիտական խնդիրներ, որոնք դառնում են խիստ անհրաժեշտ հասարակության համար՝ բնակչության գեղագիտական ճաշակի ձևավորում, արտադրության և առևտրի մշակույթի բարձրացում: Ինքնուրույն դեր է խաղում նաև գովազդի խնդիրը, որն ընդհանուր է արդյունաբերական դիզայնի բոլոր օբյեկտների համար: Որոշ դեպքերում այն հանդես է գալիս որպես գլխավոր (օրինակ՝ գովազդային պաստառ), որոշ դեպքերում էլ դառնում է երկրորդական (օրինակ՝ ապրանքանիշ, բլանկ), սակայն առկա է միշտ:

Այսօր գովազդային գործառույթի դերն էապես աճել է շուկայում միմյանցից որակով և գնային չնչին տարբերությամբ ապրանքների առատության հետևանքով: Եվ հանդիսանալով որոշիչ գործոն՝ նպաստում է ապրանքների իրացմանը, նոր ապրանքների ներդրմանը և գնորդների ընդլայնմանը:

«Գովազդը կոչված է դաստիարակելու բնակչության ճաշակը, զարգացնելու մշակութային պահանջմունքները, բարձրացնելու ապրանքի պահանջարկը, ինչն իր հերթին խթանում է արտադրության, ապրանքների տեսականու հետագա զարգացման, որակի բարձրացմանը: Գովազդը բարձրացնում է առևտրի կուլտուրան...»՝ այսպես են սահմանվել գովազդի պոտենցիալ առանձնահատկությունները դեռևս 1957թ. Պրագայում Գովազդի ոլորտի աշխատողների միջազգային կոնֆերանսի ժամանակ [2, էջ 3]:

Գովազդի գործառույթից բացի անհրաժեշտ է տարանջատել մի շարք խնդիրներ, որոնք բնութագրում են գովազդը որպես հանրային կատեգորիա:

Գործունեությունն իրականացնելով սպառման հայեցակարգի հիման վրա՝ գովազդը դառնում է հանրային հարաբերությունների ներդրման գործիք:

«Փոխանակման գործընթացի միջոցով առաջարկի ձևավորման և սպառման կարգավորման գործում գովազդը նպաստում է հանրային պայմաններում մարդու պահանջմունքներին համապատասխանող առարկաների ներդրմանը և միևնույն ժամանակ ներդրված առարկաների միջոցով ամրապնդում է հանրային հարաբերությունների ձևերը»[1, էջ 8]:

Արդյունաբերության մեջ գնորդների շուկան նախապատրաստելիս ավելի է բարձրանում գովազդի դերը, իսկ ապրանքային գովազդի դերն՝ ապրանքն իրացնելու գործում:

Գովազդային գործառույթն իրականացնելիս արդյունաբերական դիզայնի խնդիրն է՝ ստեղծել առավել արտահայտիչ, վիզուալ ընկալումն ակտիվացնող կերպարներ, որոնց նպատակն է ուշադրություն գրավել, հիշվել, հետաքրքրություն առաջացնել, տալ տեղեկություններ ապրանքի, դրա առանձնահատկությունների, օգտագործման միջոցների մասին:

Գովազդային գործառույթն իրակա-

նացվում է երկու միջոցով՝ պատկերավոր–գեղարվեստական և տեղեկատվական:

Պատկերավոր–գեղարվեստական են գրաֆիկական լուծումը, գույնը, տառատեսակը, այսինքն՝պատկերավոր միջոցների օգնությամբ մարդու հույզերի վրա ազդելու ունակ միջոցները:

Տեղեկատվական են տեքստի բովանդակությունը, խոսքը, խորհրդանիշը:

Այս երկու տեսակները սերտորեն կապված են միմյանց հետ: Տեղեկատվական միջոցներն իրականացվում են գրառումների գրաֆիկայի, տառատեսակի ընտրության միջոցով: Տառատեսակը՝ որպես գրաֆիկական տարր, օգտագործվում է այս կամ այն միտքը, գաղափարը արտահայտելու, բովանդակությունն ընդգծելու նպատակով:

Գովազդային գործառույթի արդյունավետության կարևորագույն պայման է նախագծի պոլիգրաֆիկ կատարման բարձր որակը: Առանց այս պայմանի արդյունաբերական դիզայնում գովազդն անզոր է, իսկ պոլիգրաֆիկ միջոցների բազմազանությունը անսահմանափակորեն ընդլայնում է արդյունաբերական դիզայնի գովազդային հնարավորությունները:

Գովազդային գործառույթի իրականացման այլ պայման է հանդիսանում գովազդի տարբեր օբյեկտների ճիշտ օգտագործումը ըստ տեղի և ժամանակի:

Արդյունաբերական դիզայնի հիմնական խնդիրների, դրանց փոխկապակցվածության ուսումնասիրությունը, արդյունաբերական դիզայնի գլխավոր և երկրորդական խնդիրների, յուրաքանչյուր օբյեկտի սահմանումն էլ կազմում է ֆունկցիոնալ վերլուծության բովանդակությունը և հանդիսանում է նպատակային նախագծման անհրաժեշտ պայման: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է նշել երկու պայման. առաջինը՝ արդյունաբերական դիզայնի օբյեկտներից յուրաքանչյուրին բնորոշ ֆունկցիոնալ խնդիրների բովանդակությունը և յուրահատկությունը, և երկրորդը՝ հիմնական օբյեկտների մշակման օրինաչափությունները: Ընդհանուր առմամբ այս երկու պայմանները պատկերացում են տալիս են օբյեկտների հիմնական տեսակների մասին:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 01.11.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՄՀԿ, 2–րդ մաս, 5–րդ գլուխ, էջ 8
2. «Реклама», сборник статей. М.: 1960. С. 3.

ПРОМЫШЛЕННЫЙ ДИЗАЙН В ХУДОЖЕСТВЕННОМ ПРОЕКТИРОВАНИИ

ЕГИАЗАРЯН АНУШ

Заведующая кафедрой дизайна и декоративно–прикладного искусства Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, доктор педагогических наук, профессор

МЕЛИКЯН ЛИЛИТ

Ассистент кафедры дизайна и декоративно–прикладного искусства Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье отмечается, что в настоящее время промышленный дизайн приобрел исключительную актуальность, вошел в структуру специализированных художественно–конструкторских организаций и требует сугубо профессионального подхода в постановке задач и методов их решения. Количество профессиональных художников–конструкторов как специализированных, так и работающих в рамках промышленных предприятий будет неуклонно расти, так как этого потребует растущее общественное значение продуктов промышленной графики, разнообразие ее задач и чрезвычайно широкая сфера использования.

Дата представления статьи: 01.11.2012

INDUSTRIAL DESIGN IN ARTISTIC PROJECTING

ANUSH YEGHIAZARYAN

Head of the Chair of Design and Decorative Applied Art, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Doctor of Pedagogical Sciences, Professor

LILIT MELIKYAN

Lecturer of the Chair of Design and Decorative Applied Art, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

The industrial design, which has got its exclusive actuality, is included in the structure of professional drawing–designing organizations. Professional approach is required in order to define problems and find their solutions. It is obvious that the number of professional artists and designers is supposed to grow among the industrial enterprises. The public–economic importance of the production of the industrial design is setting its requirements for solving variety of problems and its increased sphere of application.

Article submission date: 01.11.2012